

Մ. Մ. ԽԱՄՁԱԵՎ ՅԵՎ Բ. Ն. ԶԵՅԴԼԻՑ

2
10.26

ՄԲԱԿԻ
ԴԱՅՏԻ
ԱՇՆԱՆԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

631.414

Ա-20

ԱՆԴՐ-ՔԱՍՔԱԿԿՈՒՄ

631.41

n 4 AUG 2010
633.41

ju-20

ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾԻ ԳՐԱԳԱՐԱՆ
ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՍԵՐԻԱ

ԲԱՄԲԱԿԻ ԴԱՇՏԻ
ԱՇՆԱՆԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ԱՇԽՏՐ. ՈՐԹ
ՄԻՒ 1026
✓
Զ

ԳԼԵԲԱՄԲԱԿՈՍԻ ԱՆԳՐԿՈՎԿԱՍՑԱՆ
ԲԱԺԱՆՍՈՒՆՔԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԹԻՖԼԻՍ 1930 Ք.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊՐԵՍՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊՐԵՍՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2001

Տպարան Ա. Ֆ. Մյասնիկյանի ան. հրատ. «Զարյա Վոստոկ»-ի
Պատվեր № 2630 Գլավիժա № 2021 Քանակ 2.000

Ամեն մեկի համար, ով բամբակի ցանքսով է պարապում, լինի դա խորհրտեսուծիան, կոլտեսուծիան կամ անհատական տնտեսուծիան մեջ ձգտում է ըստ հնարավորութեան մեծ քանակութեամբ բամբակ ստանալ: Այդ բանին շատերն են ձգտում, սակայն քչերն են հասնում նպատակին: Յեկ այդ անաջողութեան հանցանքն ընկնում է հաճախ իրենց բամբակագործները:

Խորհրտեսուծիուններն իրենց դաշտերում գործադրում են այն բոլոր միջոցները, ինչ հնարավորութուն է տալիս բերքատվութունը բարձրացնելու: Սակայն կոլտեսուծիուններից շատերը և անհատական տնտեսուծիուններից համարյա բոլորը դեռ ևս շարունակում են տնտեսութեան հին ձևը: Վերջինները չեն ոգտագործում գյուղատնտեսի խորհուրդները և չեն գործադրում մշակման նոր ձևերը և նախապատրաստում բամբակի դաշտերը: Մինչդեռ այդ նոր միջոցները մշտապես տալիս են լավ արդյունքներ:

Հաճախ մեր բամբակագործները չափազանց քիչ են ուշադրութուն դարձնում իրենց դաշտերի վրա. բամբակը ցանում են գարնանը հապճեպ վարած հողերի վրա և հենց առաջին վոտոզումից անմիջապես հետո թողնում, գնում են սարը: Դաշտերը մնում են անտեր ու անխնամ, ինչպես էան առանց հերթական վոտոզումների:



Նման վերաբերմունքի պատճառով ցանքսերը փչանում են, բերքատվությունն ընկնում է, բամբակագործի յեկամուտը պակասում է և նա զալիս է այն յեզրակացություն, վոր չարժե առհասարակ բամբակ ցանել:

Մինչդեռ բամբակի ցանքսը շատ շահավետ է և յեթե նա լավ խնամվի, ապա այն ամբողջ հողան ու խնամքը, վոր թափել է բամբակագործը մինչև ցանքսը դաշտի կանոնավոր նախապատրաստման, ցանքսի և ամրան մշակման վրա՝ իրենց ծախսը կհանեն, քանի վոր բամբակագործը բերքահավաքին կստանա տասնյակ և հարյուրավոր կիլոգրամներ ավելի բամբակ:

Ի՞նչ պետք է գիտենա և անի բամբակագործը, վորպեսզի դաշտի յուրաքանչյուր հեկտարից հնարավորություն ունենա մշտապես 8 ցենտներից (50—55 փութ) վոչ պակաս բամբակի հում բերք ստանա:

Դրա համար նա չպետք է մոռանա կատարել հետևյալը.

- 1) Ընտրել բամբակի հարմար դաշտ:
- 2) Դաշտը մաքրել մոլախոտերից և թփուտներից:
- 3) Հարթել հողամասը:
- 4) Յեթե հողը աղային է, կատարել հողի լվացում:
- 5) Աշնանն իր ժամանակին մշակել հողը:
- 6) Կատարել ծմեռային արատ, առանձնապես այն շրջաններում, ուր գարնանը զգացվում է ջրի պակասություն (Մուղանի աղային, Շիրվանի, մասնակիորեն Գյանջայի շրջաններում և Վրաստանի բամբակային բոլոր շրջաններում):

7) Թողնել սապուվարը և անցնել արտոին, վորով բամբակի ավելի հուսատու բույս կստացվի:

8) Ծիլերի յերևույց հետո լավ խնամել դաշտը:

Այս բոլորի մասին կարելի յե մանրամասն ծանոթանալ Անդրկովկասի բամբակային կոմիտեյի «Բամբակագործի զբաղարան» ընդհանուր անվամբ հրատարակված գրքույկներից:

Իսկ այստեղ մենք պետք է խոսենք բամբակի դաշտերի այն աշխատանքների մասին, վորոնք կատարվում են աշնան կամ ձմրան ամիսներին:

ԻՆՉՊԵՍ ԸՆՏՐԵԼ ԲԱՄԲԱԿԻ ԴԱՇՏԻ ՏԵՂԸ

Բամբակը կարող է աճել և լավ բերք տալ համարյա բոլոր տեսակի, նույնիսկ սակավ պտղատու հողերում: Սակայն ավելի լավ հասնում է արգավանդ խորը հողերում:

Ավագոտ և ծանր կավային հողերում բամբակը նույնպես հաջողություն կարող է հասնել, սակայն այդ հողերը ճանճացած չպետք է լինեն և պետք է պարունակեն անդարար նյութեր:

Բամբակենու հաջող ծլելու և զարգանալու համար անհրաժեշտ է անդարար նյութեր, վոր բավարարանակություն կամ պետք է պարունակի հենց ինքը հողը, կամ յեթե այդ նյութերը սակավ են հզուր, ապա պետք է ավելացնել մարդու ձեռքով, այլ կերպ ասած, այն հողերը, վորոնք հարուստ չեն անդարար նյութերով՝ պետք է պարարտացնել:



42700.63

Բամբակենին հարավային բույս ե, շատ ե սիրում արև և վախենում ե ցրտից:

Այդ պատճառով ել բամբակի ցանքսի համար ըստ հնարավորութեան պետք ե ընտրել այն պիտի հողամասեր, վորոնք ընկած լինեն հարավային, հարավ-արևելյան կամ հարավ-արևմտյան արևով լավ տաքացած զառիվայրերում:

Ցանքսերը պետք ե պաշտպանված լինեն նաև հյուսիսային ցուրտ քամիներեց, վորոնք յերբեմն վը-չացնում են բամբակենու մատող ծիլերը:

Վորպեսզի բույսերն ավելի քիչ տուժեն ցրտից, ավելի լավ ե ցանքսի համար ընտրել ավելի բարձր վայրեր: Պետք ե գիտենալ, վոր խոր հովիտներում կամ չորս կողմից լեռներով պատած վայրերում հաճախ պատահում են ցրտեր, վորոցից ինչպես վերն ասվեց, բամբակեղենները վախենում են:

Լեռնային խիստ թեք զառիվայրերում, ձորերում կամ լեռների փեշերում բամբակը չի կարող լավ բերք տալ, քանի վոր այդ վայրերն որվա ընթացքում հազիվ մի քանի ժամ են տաքանում և վատ ել լուսավորվում արևով:

Փոս ընկած և առափնյա հողերը, ուր ստորյերկրյա ջրերը (այն ջրերը, վորոնք հավաքվում են ցանքի հողի անմիջական շերտի տակ) բարձրանում են դաշտի յերեսին շատ մոտիկ, նույնպես լավ բամբակի մշակութի համար: Բանը նրանումն ե, վոր ստորյերկրյա այդ ջրերը կարող են շատ բարձրանալ, հեղեղել արմատները և կտրել ողի մուտքը դեպի այդ նույն

արմատները: Իսկ առանց այդ ողի հոսանքին բույսն ապրել չի կարող և կվոչնչանա:

Բացի դրանից, այդ ջրերը բարձրանում են հողի յերեսը, գոլորշիանում են և վարելահողի վրա թողնում են այն աղերը, վորոնք առաջ գտնվում եյին ջրի մեջ: Հողի յերեսը կծածկվի աղերով և առաջ կբերի այսպես ասած աղուտներ:

Մինչդեռ ամեն մարդ գիտե, վոր աղոտ վայրերում յեթե աղը չլվանալ բամբակը վատ կաճի:

Բամբակի բարձր բերք չեն տա նաև հումուսով հարուստ կամ չափազանց պարարտացրած հողերը:

Այդպիսի չափազանց հարուստ կամ չափազանց պարարտացրած հողերում բամբակենին կաճի խիստ արագ, կստեղծի կանաչի հսկայական զանգված, լավ կծաղկի, սակայն կուշանա հասունանալը: Այդ պատճառով ել նման դաշտերում բերքը շատ ցածր կլինի:

Բամբակենին սևահող աղադաշտերում բոլորովին չի աճում, իսկ վոչ սևահողերում կստացվի բամբակի վոչ վատ բերք: Սակայն դրա համար անհրաժեշտ ե ժամանակին լվանալ աղոտ դաշտը, իսկ թե ինչպես ե կատարվում դա, մենք կասենք հետագայում:

Ավազով առատ հողերում բամբակը վատ ե հասնում: Քիչ քանակութեամբ ավազի խառնուրդը ձանր կավային հողի հետ, ավելի նպաստավոր կդառնա բամբակենու ցանքսի համար: Քիչ քանակութեամբ ավազի կամ մանր լսճերի խառնուրդը հողին նույնպես ոգտակար կլինի, վորովհետև քարը յերկար ե պահում ջերմությունը, իսկ դրանից գարնանը տաքանում ե հողը:

ՀՈՂԱՄԱՍԸ ՊԵՏՔ Ե ՄԱՔՐԵԼ ԹՓՈՒՏՆԵՐԻՑ ՅԵՎ ԾԱՌԻ ԱՌՄԱՏՆԵՐԻՑ

Սակավ ե պատահում, վոր չընտրած հողամասում կարելի լինի ուղղակի անցնել հողի մշակման: Հաճախ պետք ե լինում սկզբում հողամասը կարգի բերել, այսինքն նրան մաքրել խոշոր մոլախոտերից, թփուտներից, ծառի արմատներից կամ ծառերից, տեղ-տեղ հարթել դաշտի յերեսը, լվանալ աղուտները և այլն:

Նկարագրենք բոլոր այդ աշխատանքները և տեսնենք, թե ինչի համար են դրանք պետք և ինչ ոգուտ են տալիս:

Դաշտերի մեջ բուսած ծառերը շվաք են գցում ծիլերի վրա: Դրանով խանգարվում են ցողունների կանոնավոր դարգացումը, ծաղկումն ուշանում ե, կընգուղները չեն կարողանում հասունանալ և բերքը պակասում ե: Այդ պատճառով ել ծառերը պետք ե հեռացվեն դաշտից:

Նույնպես դաշտերից պետք ե մաքրել ծառերի արմատները և բոլոր թփուտները: Դրանց պետք ե հեռացնել, քանի վոր դրանք խիստ խանգարում են բոլոր աշխատանքներին և թանգացնում են ցանքսերի խնամքը:

Յեվ իսկապես՝

1) Վարի ժամանակ պետք շրջել թփուտի շուրջը, իսկ դրանից կառաջանա անկանոն, անհարթ տեղ-տեղ չվարած հերկեր:

2) Յեթե դաշտի մեջ թփեր քան, ապա դժվար, կամ նույնիսկ անհնար կլինի շարքային ցանքսերը, իսկ ամրանն հարկադրված կլինենք հրաժարվել կուլ-

տրվատորներով միջշարքային մշակումից, վորոնք շատ ավելի հեշտացնում են և աժանացնում են դաշտերի ամարային խնամքը:

3) Թփուտներից և նրանց արմատներից տնտեսությանը մեծ փաս կհասնի, քանի վոր թփուտների պատճառով հաճախ կտորվում են գյուղատնտեսական գործիքների և մեքենաների մասերը, ամբողջ աշխատանքը խիստ դժվարանում ե և ընդհանրապես չեն կարողանում լավ աշխատել:

4) Թփուտների մեջ դժվար ե մոլախոտերը վոչընչացնել: Իսկ ուր կան մոլախոտեր, այնտեղ իրենց հասակով ապաստարան կգտնեն բամբակի ամեն տեսակ վնասատուները:

5) Թփերը (դժնեկ, մոշավայրի, նոնի) բամբակենուց խլում են շատ սննդարար նյութեր և խոնավություն, բացի այդ, նկատված ե, վոր թփերն ընդհանրապես զրավում են ամենալավ, ամենապտղատու հողերը:

6) Վայրի բուսականությամբ զրավված վայրերը տնտեսության համար կորչում են իզուր, իսկ այլպիսի տեղերը բավական շատ են լինում: Մի քանի շրջաններում խիստ շատ են թփուտները: Յեթե որինակ թփուտներով պատած մի հեկտար տարածության հողի կտորները հավաքենք մի տեղ, ապա կստացվի մեկ յերրորդ հեկտար մեծություն ունեցող տարածություն: Յեվ դուրս ե գալիս, վոր բամբակագործը պետք ե մշակի, ջրի, վճարի հերկի, ցանքի կուլտիվացիայի և այլն մի ամբողջ հեկտարի համար, իսկ բերք պետք ե ստանա միայն յերկու յերրորդ հեկտարից:

Այժմ հասկանալի չե, վոր յեթե բամբակի դաշտի համար հատկացվում ե այնպիսի տեղ, ուր յեղել ե վայրի բուսականութիւն, ապա պետք ե արմատախիլ անել բոլոր թփուտներն ու կտրած ճառերի արմատները և դրանից հետո սկսել վարը:

Հողամասի մաքրման և արմատախիլ անելու համար պետք ե գործ դնել նիշտ ե մեծ աշխատանք և ծախսել բավական դրամ, բայց ամբողջ ծախսը կարելի չե դուրս բերել. ահա թե ինչպես.

1) Դաշտի մշակումը կարելի չե, ինչպես ասում են, մեքենայացնել, ձեռքի աշխատանքի փոխարեն գործադրել ավելի աժան մեքենայական մշակում:

2) Պակասում ե ջրի ծախսը, վորն անտեղի չպիտի ծախսվի թփուտները ջրելու համար, այլ ամբողջը կգնա բամբակենուն:

3) Կերճատվի գյուղատնտեսական ինվենտարի վերանորոգման, վառելանյութերի ծախսերը, ինչպես նաև մարդու և կենդանու բանվորական ույժերը:

4) Կմեծանա բամբակենու բերքն ամեն մի հեկտարից:

ԱՆՂՐԿԵՆՆԵՆ Ե ՀԱՐԹԵԼ ԴԱՇՏԻ ՅԵՐԵԱԸ

Անդրկովկասի բամբակային շրջաններում համարյա բոլոր տեղերում (Արևմտյան Վրաստանի բացառութեամբ) բամբակը մշակում են արհեստական վոտովման միջոցով: Այդ պատճառով ել անդրկովկասյան բամբակագործը պետք ե գիտենա, վոր ջրելու հարմարութեան և ջրի հավասարաչափ բաշխման համար անհրաժեշտ ե, վոր դաշտի մակերևութը լինի հարթ:

Դաշտի անհավասարութիւնը, բարձրութիւնները, թմբերը կամ փոսերը խիստ կերպով խանգարում են վոշ միայն ջրելու ժամանակ, այլ և դաշտի հետագա մշակման և խնամքի աշխատանքների ընթացքում:

Ջրելիս ցածրագիր վայրերը և փոսերն ավելի շատ ջուր կստանան, բարձրագիր վայրերը քիչ:

Անհարթ դաշտի մակերևութի ցամաքելը կգնա անհավասարաչափ: Այդ պատճառով հավասարեցրված դաշտի հողը կտաքանա նույնպես անհավասարաչափ:

Հետագայում, գարնանը և աժրանը բոլոր այդ պատճառները կբերեն իրենց վատ հետևանքները: Յեթե դաշտի զանազան մասերը ստացել են ջրի վոշ հավասար քանակութիւն և վոշ ել հավասար տաքացել են արևով, ապա բամբակենու առանձին բույսերը պետք ե տարբեր ել զարգանան:

Մի բանի ծիլերի դուրս գալը կուշանա, հետևապես բամբակենու ծաղկումն ու հասունանալը, նույն հողամասի տարբեր բույսերի վրա կսկսեն տարբեր ժամանակներում:

Բայի այդ, չհարթեցրած դաշտերի բույսերի սնունդառութիւնը տարբեր տեղերում միանման չեն լինում: Մնադարար նյութերի մի մասը (առանձնապես արհեստական պարճրտացումից) բոլորովին չի ոգտագործվի բույսերի կողմից:

Այս բոլորը ուր կհասցնի: Միայն բերքի և յիկավոր պակասեցման:

Այսպիսով դաշտի հարթեցումը բամբակագործի գլխավոր խնդիրն ե:

Հողամասն ընտրելուց, արմատախիլ անելուց և դաշտի թփուտներն ու ծառերի արմատները մաքրե-

լուց հետո, անհրաժեշտ է անցնել հողամասի հարթեցման:

Մինչև այժմ մեզանում բամբակի համար հատկացրած հողերը հարթեցվում է ձեռքի գործիքները միջոցով՝ բահով, փայտահատով և այլն:

Այդ միջոցներով աշխատանքը տևում է բավական յերկար և նստում է շատ թանկ:

Մեզանում, Խ. Միռնիսյան մեջ մեծ տնտեսութուններում և մի քանի կոլտնտեսութուններում դաշտերի հարթեցման համար ոգավում են ձիան կամ տրակտորային բահերով:

Այդ բահերը բավական չափով արագացնում են աշխատանքը, հեշտացնում և արագացնում են մարդկային աշխատանքը: Բահը դաշտի վրա անցնելով կըտրում է նրա բոլոր անհարթութունները: Յերբ բահը լիքը լցվում է, նրա վրայի հողը տարվում թափվում է դաշտի փոս և ցածր մասերը կամ տարվում է դաշտի ավերը վոռոգման հարմարության համար թմբեր կառուցելու:

Յերբեմն դաշտը բահով հարթելուց առաջ, խորը վարում են (20—22 սանտիմետր խորությամբ), վորի պատճառով հետո ավելի հեշտ և արագ կարելի կլինի աշխատանքը բահով կատարել: Դաշտի վերջնական հարթեցման համար կարելի յե չբավականանալ միայն բահով, կարելի յե գործադրել նաև «Հերցերի» մեքենան:

ՇԵՐԿԻՐ ԱՇՆԱՆԸ, ՋՐԻՐ ԶՄՐԱՆԸ

Մենք արդեն ասացինք, վոր նախ քան դաշտի հերկմանն անցնելը, բամբակագործը պետք է բարելա-

վի այն: Նա պետք է հեռացնի ծառերը, արմատախիլ անի թփուտները և ծառերի արմատները, հեռացնի մոլախոտերը, հարթեցնի դաշտի յերեսը, իջեցնի հողի ստորին շերտի ջրի մակերևույթը և լվանա հողը, յեթե նա ազային է:

Հողի ստորին շերտի ջրերի մակերևույթը իջեցնելու մասին: Հողի ստորին շերտի ջրերի մակերևույթին իջեցնելու համար փորում են վորոշ թեքություն ունեցող խորը ջրանցքներ:

Ջրանցքի խորությունը կախված է նրանից, թե վորքան պետք է իջեցնել ջրի մակերևույթը (1—1 և կես մետր):

Բայց վորովհետև ջրանցքներն արագությամբ լցվում են հողով, ուստի ջուրն անցկացնելու համար դնում են կավի կամ փայտի խողովակներ, վորոնք կոչվում են դերնակներ:

Սողովակներն անցկացնելուց հետո վերևից հողով ծածկում են և այդպիսով նրանք չեն խանգարի հողի վերևի մշակումը:

Յերբեմն խողովակներ անցկացնելու փոխարեն գործադրում են ցախի խրձեր, քար և առհասարակ այնպիսի նյութեր, վորոնք ավելի աժան են ավյով վայրի համար:

Աղոտ հողերը լվանալու մասին: Աղոտ հողերի լվանալն ավելի լավ է կատարել աշնան ամիսներին: Այդ ժամանակները բամբակագործներն ավելի շատ ժամանակ ունեն, ջուրն ևս համեմատաբար ավելի առատ է, քանի վոր ամառը վերջացած է լինում և մյուս բույսերը ջրի կարիք չունեն:

Աղային ջրերի լվանալը կատարվում է հետեյալ ձևով. դաշտի վրա բաց են թողնում մեծ քանակութեամբ ջուր: Ջուրը թափանցում է հողի վերին շերտի մեջ, լուծում է այնտեղ գտնվող բույսի համար վնասակար աղը և նրան իր հետ տանում հողի ավելի խոր շերտերը: Իսկ այնտեղ այդ աղը՝ համարյա վոչ մի վնաս չի պատճառում բույսին:

Յեթե դաշտը ջրելուց առաջ հերկված լինի, հողի վերին շերտի լվանալը կկատարվի ավելի լավ և ավելի արագ:

Յեթե հողի վերին շերտը պարունակում է չափազանց մեծ քանակութեամբ վնասակար աղ, ապա լվանալը պետք է կրկնել մի քանի անգամ: Ամեն մի լվանալուց առաջ դաշտի նախնական հերկը նպաստում է աղերի արագ լվանալուն:

Մոլախոտերից ազատվելու մասին: Միջին Ասիայում մոլախոտերից ազատվելու համար գործադրվում են քեթմաները (խոշոր ուրագներ): Մեզ մոտ մատաղ մոլախոտերը մեծ մասամբ այրում են մինչև հերկը: Ամերիկայում մոլախոտերը վոչնչացնելու համար գործադրում են կամ յերկաթի ուլտեր, կամ յիրկար, մեծ գերաններ:

Յերկար ուլտի կամ գերանի ամեն մի ծայրից լծում են մեկական զույգ ձիեր: Ապա դաշտի վրայով անցնում են մի քանի անգամ զանազան ուղղութիւններով: Դրանով ի հարկե, ուլտը կամ գերանը ջարդում է մոլախոտերի և մանր թփուտների չորացած մնացորդները:

Աշխատանքներն առհասարակ պետք է կատարել ուշ աշնան չոր յեղանակին, սառնամանիքներից առաջ,

քանի վոր այդ ժամանակ բույսերի մնացորդները լինում են շատ բեկուն:

Անպետք խոտերի վիշրված մնացորդները պետք է վարել հողի հետ և վոչ թե այրել:

Մնացորդ խոտերը հողի հետ վարելուց աշնան ու ձման ընթացքում կփտեն և կպարարտացնեն հողը, այսինքն կբարձրացնեն հողի պտղաբերութիւնը:

Ծանր պինդ հողերի վարը մնացորդ խոտերի հետ ավելի կփխրացնի հողը. դրանով ողն ավելի խորը կթափանցի հողի շերտերը, իսկ դրա շնորհիվ հողի մեջ հեշտութեամբ կզարգանան զանազան ոգտակար բակտերիաները: Բույսերի հետ թեթև հողերի վարը կմեծացնի հողի կաշտնութիւնը, այսինքն կդադարի ցրիվ գալ ինչպես ավաղ, հողի մեջ կկուտակվի բուսահող և նա ավելի քիչ հատիկավոր կդառնա: Այդպիսի հողն իր մեջ լավ կպահպանի խոնավութիւնը և ավելի արգավանդ կդառնա:

Սրանով վերջացնենք մեր համառոտ գրույցը այն նախապատրաստական աշխատանքների մասին, վորոնց պետք է կատարի բամբակագործն իր հիմնական աշխատանքին՝ վարին անցնելուց առաջ:

Սակայն յէբը պետք է սկսել վարը: Ըստ հնարավորութեան շուտ: Հենց վոր դաշտն ազատվի աշնան ու գարնան հնձից, անմիջապես անհրաժեշտ է վարել:

Պետք է խորը վարել, վոչ պակաս 18—20 սմ. (4 վերշ.) վարելու այնպիսի գործիքներ պետք է ունենալ, վորոնք լավ շուռ տան հողի շերտերը, այնպես վոր հողի վերին շերտն ընկնի ակոսի մեջ:

Հերկած դաշտը չեն տափնուում և շերտերով թողնում են մինչև դարոււն: Ինչպես մենք գի-

տենք դաշտում հաճախ հասնում են շատ մոլախոտեր (սեղ, տատասկ, բանջար և այլն), վորոնք մեծ մասամբ տարածվում են արմատներով (ստորյերկրյա ցողուններ): Վորպեսզի հեշտ ազատվել այդ աներես թըշնամիներից, դաշտի մշակումը պետք է սկսել վոչ խոր վարից:

Այն դաշտերը, վորոնք ծածկված են մոլախոտերով, հունձից անմիջապես հետո, յերբ կվերցնեն հացահատիկները կամ այլ կուլտուրաները, պետք է կեղևահանել. այսինքն վարել 1 և կեսից 2 վերշոկ (հողաշերտը շուռ տալով): Կեղևահանելն ավելի լավ է կատարել արագահերկերով, կեղևահաններով և այլ հատուկ գործիքներով, լայն ընդգրկումով՝ յերեսանց՝ վարող հարմարություններով:

Յերեսանց վարի շնորհիվ միամյա և բազմամյա մոլախոտերի արմատների մեծ մասը հողի յերեսը դուրս կգա, ուր նրանք շուտով կչորանան ու կվոչընչանան արևի ու քամու ազդեցությունից:

Լավ է նույնպես մոլախոտերով խիստ առատ դաշտը կեղևահանելուց հետո տափնել զսպանակավոր տափաներով, վորոնք իրենց ատամներով հողից դուրս կքաշեն արմատները, վորից հետո նրանց կարելի յե հավաքել ու այրել:

Յեթե կեղևահանելուց հետո անձրև գա և դաշտն սկսի կանաչել, պետք է յերկրորդ անգամ վարել, նույն 1 և կես 2 վերշոկ խորությամբ: Նույն միջոցը ամեն տարի մինչև ձմեռ 2—4 անգամ կրկնելով կարելի կլինի 2—4 տարվա ընթացքում ազատվել այդ տեղակ բույսերից, ինչպես սիզից, տատասկից և ուրիշներից: Ուշ աշնանը կամ ձմրանը այդպիսի դաշտը

պետք է վարել 18—20 սմ. (4 վերշոկ) խորությամբ և շերտերով թողնել մինչև գարուն:

Ձմրան սառնամանիքները և չոր քամիները նորից կոզնեն գյուղացուն մոլախոտերը վոչնչացնելու: Կատարելով գաշտի հերկը պետք է վոչնչացնել նաև բոլոր այն մոլախոտերը, վորոնք բուսում են սահմաններում և ջրանցքներում:

Պետք է չմոռանալ, վոր մոլախոտերի մեջ ձմերում են բամբակենու և բոլոր մնացած գյուղատնտեսական բույսերի վնասատուներից շատերը:

Սահմանների մոլախոտերի վոչնչացումը (այրելը) խոչընդոտ է հանդիսանում այնպիսի ֆլասատուների տարածման, ինչպիսին է ափիսը (շիրան) և շատ ուրիշները: Ձմրամերձ հերկը նույնպես նպաստում է ֆլասատուների դեմ յեղած պայքարում, քանի վոր նրանցից շատերը ձմերում են այս կամ այն ձևով հերկի վերին շերտերում:

Շերկով մենք վոչնչացնում ենք այն բույսերը, ուր ձմերում են ֆլասատուները: Վարի միջոցով յերես հանելով ֆլասատուներին մենք նրանց յենթարկում ենք անձրևի, ձյան, սառնամանիքի ազդեցության և նրանք վոչնչանում են (ինչպես որինակ կընդողի վորդը, լուսաթիթեռի թրթուրները և այլն): Յեթե հերկած դաշտը դեռ ևս ջրվում է, ապա այդ միջոցը լիովին վոչնչացնում է բամբակենու բոլոր ֆլասատուներին:

Բացի այդ բոլորից, կանուխ կատարված խորը վարը միշտ խիստ բարձրացնում է բերքը, վորովհետև մինչև գարուն հողի մեջ վերջանում է լիովին փառսի և վարած դաշտերի բույսերի քայքայումը: Իսկ դրա-

59-00454



նով, ինչպես մենք գիտենք, բամբակի համար պատ-
րաստվում ե լավ սննդարար կերակուր:

Սորը հերկից (առանձնապես Մուղանում) չպետք
է վախենալ: Ճիշտ է կարող ե պատահել, վոր խորը
հերկի դեպքում յերես դուրս գան հողի ստորին այն-
պիսի շերտեր, վորոնց մեջ կարող են լինել ֆլասակար
աղեր: Սակայն դա վտանգ չի ներկայացնում, քանի
վոր ձմրան և գարնան ընթացքում (մինչև ցանքը)
անձրևները, ձյունը, նույնպես և ձմրան ջրերն աղը
տանում են հերկի շերտից:

ԻՆՉ Ե ԶՄՐԱՆ ԱՐԱՏԸ ՅԵՎ ԻՆՉՈՒ ՀԱՄԱՐ Ե ՆԱ ԿԱՏԱՐՎՈՒՄ

Աղբրեջանի արևելյան մասը (Մուղան, Մելի դաշտ
և այլն) բամբակենու մշակման համար շատ հողեր կան,
ուր կարելի յե ստանալ բամբակի մեծ բերք, սակայն
դրան հաճախ խանգարում են ջրի պակասութունը
կամ փոռոզման համար ջրից ոգտվելու անկարողու-
թյունը:

Հայտնի յեն շատ դեպքեր, յերբ անկանոն վո-
ռոզումից առաջ են գալիս հողի կրկնակի աղոտու-
թյուն, այսինքն այն հողը, վորն առաջ արգավանդ
եր և տալիս եր բամբակի լավ բերք, նրա վրա նորից
աղ ե գոյանում:

Վորպեսզի դաշտն ազատվի նման դժբախտ
դեպքից, չպետք ե ի չարն գործադրել ջրելը և
կանոնավոր փոռոզելը (տես Անդկովկ. բամբակ-
կոմիտ. հրատարակած «Ջրի և ջրելու մասին»
գրքույկը):

Այստեղ մենք կխոսենք հատկապես ձմերային
արատի մասին, վորի կիրառումը կարող ե շատ ոգուտ
բերել Արևելյան Աղբրեջանի բամբակագործին:

Արևելյան Աղբրեջանում բամբակի ցանքը սո-
վորաբար ջրվում է ամրան ընթացքում յերկու ան-
գամ: Առաջին անգամ կատարվում է նախացանքային
ջրելը (արատ), իսկ յերկրորդ ջրելը կատարվում է ա-
վելի ուշ, հունիսին կամ հուլիսին:

Մուղանի դաշտի բնակիչները, առանձնապես հը-
ները, սակայն, հիշում են, վոր առաջ նոր թարմ հողե-
րի ցանքսերը տալիս եյին բամբակի մեծ բերք (մին-
չև 100 փ. և ավելի մեկ հեկտարից) միայն մեկ նա-
խացանքային ջրելով: Յեվ ամրան ջրելը Մուղանում
համարվեց ավելորդ:

Բայց վորովհետև փոռոզման կարիք ունեցող միև-
նույն տեղում յերկար տարիների ընթացքում ցանքս
և կատարվել, սպա հողի մեջ փոռոզման ջրի պատճա-
ռով տեղի յե ունեցել փոփոխություն: Հողը կորցրել է
իր մանր հատիկայնությունը, շուտ ցրվելու հատկու-
թյունը և սկսել է խտանալ:

Այդ պատճառով ամրան ջրելը (առանձնապես
Մուղանի հին վառելահողերում) դառնում են պարտա-
դիր, քանի վոր դա մեծացնում է բերքը:

ՆԵՐԿԱՅՈՒՄՍ ԵՆ ԶՄՐԱՆ ԶՐԵԼՈՒ ՈԳՆՈՒ-
ԹՅԱՄԲ ՅԵՎ ՀՈՂԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՄՇԱԿՄԱՆ ՈՒ
ԱՇՆԱՆԻՑ ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՊԱՏՃԱ-
ՌՈՎ, ՆՈՒՅՆ ԻՄԿ ՀԻՆ ՎԱՐԵԼԱՋՈՂԵՐԸ ԿԱՐԵԼԻ
ՅԵ ԱՆՑ ԿԱՑՆԵԼ ԱՌԱՆՑ (ՅԵՐԿՐՈՐԴ) ԱՄԱՐԱ-
ՅԻՆ ՎՈՌՈԳՄԱՆ.

Հյուսիսային Մուղանի շատ հին բնակիչներ ներկայումս ել բամբակի ցանքսը կատարում են առանց ամրան վոտոգման և ամեն տարի մեկ հեկտարից 15—16 ցենտներ (մինչև 100 փ.) բամբակի բերք են ստանում:

Բանն ինչո՞ւնն է:

Ինչո՞ւ ձման արատը այդպիսի ազդեցութիւնն և անուժ հողի վրա: Ինչո՞ւ նրա ոգնութեամբ կարելի չե ունենալ այդպիսի լավ բերք:

Ամեն մարդ շատ անգամ տեսել է և լավ գիտե, վոր աշնան հերկած և աշնան ու ձմրան ընթացքում ձյան ու սառնամանիքի յեթարկված դաշտը կզառնա փխրուն, յերեսին չի բռնի տղմակեղև և հեշտութեամբ կբաժանվի մանր գնդիկների:

Գարնանային անձրևները հողին չեն զրկում այդ հատկութիւններից, վոր նա ստացել է շնորհիվ աշնանային հերկի:

Անա ձմերային արատը դրա համար ել արվում է, վորպես ձմեռվա ընթացքում կուտակվի խոնավութիւնը, իսկ հողը լավ սառչի, փխրանա և պատրաստ լինի գարնան ցանքսին:

Հետագա մշակման համար մարդ պետք է միայն ձգտի չխանգարի և չվոչնչացնի ձմեռվա ընթացքում հողի ստացած լավ հատկութիւնները. փխրունութիւնը, փափկութիւնը, հեշտութեամբ ցրվելու հատկութիւնը, անձրևից հետո յերեսին տղմակեղև չբռնելու հատկութիւնը և այլն:

Վորպեսզի հողի այդ լավ հատկութիւնները չըվոչնչանան, հետագա մշակման ընթացքում չպետք է

յերբեք վարել այնպես, վոր հողի վերին շերտը շուտ չգա ներքև

Դրա համար գարնանը կրկնակի հերկը (յերկրորդումը) վարելահողերի մուխտտերը վոչնչացնելը և այլն պետք է կատարել հողի վերին շերտը շուտ չտվող գործիքներով, այլ միայն մուխտտերը կտրատող, վերին շերտն իրար խառնող:

Այդ նպատակի համար հարմար են սովորական յերկխտիավոր գութանը, արագահերկը, յեթե մինչև վարն այդ գործիքներից հանեն թեկերը:

Բացի այդ գործիքները, փխրեցման համար կարելի չե ոգտվել սովորական՝ ձիան կուլտիվատորով արակտորի «Ինտերնացիոնալ» կուլտիվատորով, կամ տեղական գործիքով «խել» և այլն:

Հողի ներքևի մասը միշտ ավելի խոնավ է, իր մեջ ավելի շատ ջուր է պարունակում, քան ամենավերին շերտը: Այդ պատճառով ել գարնանային հերկի ժամանակ յերբեք չպետք է այդ ավելի խոնավ շերտը շուտ տուլ դեպի վեր. քանի վոր վերեից արագ կչորանա արևի տաք ճառագայթներից և բացի այդ կառաջանան կոշտեր, վորոնց դժվար կլինի ապինել և նրանք կըխանգարեն շարքացանի կանոնավոր աշխատանքին:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏԲ Ե ԿԱՏԱՐԵԼ ՁՄՐԱՆ ԱՐԱՏ

Հերկի համար դաշտը կնախտպատրաստվի այնպես, ինչպես այդ մասին արդեն ասված է այս գլուխում:

Հերկը կարելի չե անել ամբողջ գարնան և ձմրան ընթացքում:

Ինչքան շուտ կատարել հերկը, այնքան լավ քանի վոր այդ դեպքում դաշտն ավելի մեծ բերք կտա: Հերկը պետք է խորը կատարել, վոչ պակաս 18 — 20 սմ. (4 վերշ.):

Յեթե կանուխ հերկից հետո մինչև ցրտերը դաշտը նորից ծածկվի մալխոտերով, ապա պետք է յերկրորդ անգամ վարել արագահերկով, գրուբետով, վորպեսզի մոլախոտերը վոչնչանան:

Չմրան ջրելը պետք է սկսել դեկտեմբերից վոչ կանուխ, կարելի յե շարունակել մինչև ցրտերը — մինչև հունվար, իսկ մի քանի տեղերում, նաև մինչև մարտը, թողնելով ազատ ժամանակ, ջրանցքների անհրաժեշտ նորոգման, գլխավոր կառուցումների և ջրանցքների մաքրման համար:

Ջրելու համար ջուր է ծախսվում մեկ հեկտարին մինչև 3000 խոր. մետր:

Ջուրը դաշտի մեջ թողնվում է աստիճանաբար, պետք է հետևել վոր ջուրն ամբողջովին չծածկի ակոսի հողի մինչև վերին ծայրերը: Յանկալի յե ջուրը դաշտի մեջ չթողնել 1—1 և կես որվանից ավելի:

Չափից ավելի վոռոգումը ֆեսասակար է, մասնավանդ Մուղանում: Այդպիսի դեպքերում վոռոգման ջրերը կմխանան ստորհողյան ջրերին: Դրանից առաջ կգա հեղեղում, ճահճացում, կամ հողի կրկնակի աղայնութուն: Ոգուտի փոխարեն կստացվի վնաս:

Վոռոգված դաշտը թողնվում է մինչև գարուն:

Յեթե ձմեռը չոր է, առանց անձրևի և ձյան, ապա վոռոգված դաշտը անպատճառ պետք է տափնել, վոր պեսզի խոնավութունը մնա հողի մեջ:

Յեթե կա տրակտոր կամ տիսկավոր տափան, ապա հերկը պետք է տիսկով տափնել:

Չմեռվա ջրած դաշտի փխրեցման համար կատարվող հետագա տափնումը պատք է կատարել հունվար-մարտ ամիսների շրջանում, յեթե դաշտի վրա խիստ շատ են աճել մոլախոտերը:

Հերկի նախապատրաստական աշխատանքները և նրանից հետո յեկող տափնումը ինչպես նաև ցանքսը պետք է կատարել ապրիլի 20-ից մինչև մայիսի 10-ի շրջանում: Վորքան շուտ վերջանա ցանքսը, այնքան մեծ կլինի բերքը:

Յեթե բոլոր այդ աշխատանքները կատարվեն վերոհիշյալ ժամանակներում, ապա վոչ գարնանը՝ ցանքսից առաջ, և վոչ ել ամրանը՝ դաշտն այլ ևս ջրելու կարիք չի զգացվի:

Չմրան արատով ցանված բամբակը դաշտերում, պետք է կատարել 2 անգամ ձնոթի և 3—4 անգամ ձիան կուլտիվատորով քաղհան ԱՄՐԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ:

Քաղհանի թիվը կախված կլինի յեղանակից (անձրևից) և մոլախոտերի քանակից, վորոնք յերևան կըզան դաշտերում *):

Այսպիսով, մշտապես մեծ բերք ստանալու համար պետք է կատարել հետևյալը.

- 1) Բամբակ մշակելու համար դաշտ ընտրել, ըստ հնարավորության հարավային լանջերում:
- 2) Հողամասը պաշտպանել հարավային ցուրտ հողմերից:

*) Բամբակի դաշտի մշակման մասին մանրամասն կարելի յե ծանոթանալ Անդր. բամբ. կոմի. հրատարակած «Բամբակի դաշտի մշակումը» գրքույկից:

3) Հողամասը լիակատար կերպով մաքրել ծառերից, արմատներից, թփուտներից, սոլախոտներից և այլն:

4) Հարթել հողամասը: Դա հնարավորություն կտա կանոնավոր բաշխել վոտոգման ջուրը և ստանալ հավասարաչափ ցողուններ, հավասարաչափ հասունություն:

5) Յեթե հողը դարձել է աղային, պետք է լըվանալ հողը:

6) Հացահատիկային կուլտուրաներից ազատված դաշտերը, բերքի վերջացնելուց անմիջապես հետո, պետք է կեղևահանել—վարել 1 և կես 2 վերջով խորությունը, դրանով կվոչնչանան սոլախոտերի և վնասատուների մեծ մասը:

7) Ամրանը կեղևահանած դաշտերը՝ աշնանը պետք է խորը վարել 18—20 ս.՝ (4 վերջ.) խորությունը:

8) Բամբակից ազատված դաշտերը, բերքի և ցողունի վերցնելուց հետո, կամ հատուկ գործիքով—«կուրտեր» (փշրող) ցողունի փշրելուց հետո, իսկույն և յեթ պետք է վարել 18—20 սմ. (4 վերջ.) խորությունը: Այդ միջոցը և հետագա վոտոգումը կվոչնչացնի սոլախոտերի և վնասատուների մեծ մասը:

9) Աշնանը կամ ձմրանը փարած դաշտերը պետք է լավ վոտոգել դեկտեմբերից մինչև ցրտերը: Չուրը հողամասի վրա պետք է պահել 1 և կես ուր, պետք է հետևել, վոր ջուրը թողնելիս, նա ծածկի վարի վերին շերտերը: Չափից ավելի ջուրը վնասակար է, վորովհետև կարող է բարձ-

րացնել ստորահողյա ջուրը, հեղեղել և առաջ բերել մասնակի ճահճացում: Մեկ հեկտարի համար պետք է ծախսել մինչև 3000 խոր. մետր ջուր:

10) Ձմրան վոտոգումն հնարավորություն կտա ժամանակին ցանքսն սկսել, վերացնել գարնան ջրի հերթը և պակասեցնել հողի ստորաշերտյա ջրի բարձրացումը, վորը միշտ շատ կլինի գարնանը ցանքսի նախապատրաստական վոտոգումների շրջանում:

11) Ձմրան վոտոգումը հեշտացնում է աշխատանքը, վորովհետև գարնան ընթացքում հարկ չի լինում աշխատավոր ձեռքերը զրկել նախացանքսային արատ կոտարելու համար:

12) Ամրան արատը նպաստում է հողի յերեսից վնասակար աղերը լվանալուն և գարնան համար կպատրաստեն լավ փխրուն, խոնավ հող բամբակի ցանքսի համար:

13) Չոր ձմրանը (առանց ձյան և անձրևի) ջրած դաշտը պետք է 1—2 անգամ տափնել «Զիգ-Չագ» յերկաթի տափանով:

14) Տաք ձմրան դեպքում ջրած դաշտը կարող է ծածկվել մոլախոտերով, այդպիսի դաշտն անպատճառ պետք է վարել առանց հողի վերևի շերտը ներքև անելու և վարից հետո տափնել:

15) Նախացանքսային վարն անմիջական անհրաժեշտ տափանումի հետ պետք է կատարել այն հաշվով, վոր ցանքսերը վերջանան ապրիլի 20-ից մինչև մայիսի 10-ը:

16) Բոլոր մութը հարցերի մասին անմիջապես պետք է դիմել գյուղատնտեսին, վորից յուրա-



Քանի որ բամբակագործ կտանա գործնական խորհուրդ: Ոգտակար և հաճախ լինել հարևան խորհանտեսություններում, ուր միշտ կարելի չե գտնել շահեկանը և նորը բամբակի մշակման գործի համար, իսկ հետո այդ փոխադրել իր տնտեսության մեջ:

Չպետք և մոռանալ, վոր բոլոր միջոցառումները հեշտ և անցկացնել խոշոր տնտեսություններում, և վոչ թե անհատական մանր հողամասերում: Թփուտների, ծառերի արմատախիլ անելը, հողամասի հարթելը, բոլոր այդ աշխատանքները դժվար են: Դրանք անհատական տնտեսության ուժից վեր են, վորը միջոցներ չունի ծառերն արմատախիլ անող թանգագին մեքենաներ, տրակտորային բահեր, տրակտորներ գնելու: Հասկանալի չե, վոր նման մեքենաները մանր տնտեսության համար ձեռնտու չեն:

Մանր տնտեսություններից գյուղական ընկերություններ կամ այլ միություններ կազմակերպելու դեպքում բոլոր այդ հարցերը կլուծվեն հեշտությամբ, քանի վոր միությունից կտացվի խոշոր տնտեսություն, ուր անդամների միությունը կարող և դառնալ մասնագիտական և այդպիսի տնտեսության համար ձեռնտու չե և նա կարող և գլուխ բերել գնումներ և ոգտագործել լավագույն գյուղատնտեսական մեքենաներն ու ինվենտարը:

Բամբակագործ հիշիր, վոր բոլոր այդ միջոցներն անցկացնելով կյանքի մեջ և նրանց ձիշտ գործադրությամբ կհեշտացվի բարձր բերք ստանալու խնդիրը և կբարձրանա տնտեսության յեկամուտը:

« Ազգային գրադարան



NL0280392



1916 6 10 409.

19.065

1916

1917